

ԱՆԴՐԱՆԻԿ ՍՈՒՐԲ ՊԱՏԱՐԱԳ ԵՎ ԱՌԱՋԻՆ ՔԱՐՈԶ

Հուլիսի 18-ին, կիրակի.—Վարդավառ: Պայծառակերպութիւն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի:

Օրվա մեծ տաղավարի առիթով և Վեհափառ Հայրապետի բարեհաճ կարգադրությամբ, Մայր Աթոռի նորապսակ Տ. Հովնան, Տ. Աբել և Տ. Զատիկ աբեղաները, որոնք Ս. Էջմիածնի մայրավանքի խաղաղ ու վանական մթնոլորտում անցկացրել էին «պահօք, աղօթիւք և եկեղեցական վարժիցն սերտողութեամբ» իրենց կանոնական քառասունքը, այսօր մատուցեցին իրենց քահանայական անդրանիկ պատարագները և քարոզեցին Վարդավառի տոնի հոգևոր և ս. գրական նշանակության մասին:

Տ. Հովնան աբեղան իր ուխտի անդրանիկ ս. պատարագը մատուցեց Մայր տաճարի Ավագ սեղանի վրա և «Հայր մեր»-ից առաջ քարոզեց «Տէ՛ր, բարւոք է մեզ աստ լինել» (Մատթ. ԺԷ 4) բնաբանով:

Տ. Աբել աբեղան նույն օրը և նույն առիթով իր անդրանիկ պատարագն է մատուցում Ս. Հռիփսիմե վանքի տաճարում և քարոզում «Որ զճառագայթ փառաց քոց ցուցեր արեգակնակերպ փայլմամբ, զարարածս լուսաւորեցեր» շարականի բնաբանով:

Տ. Զատիկ աբեղան Երևանի առաջնորդանիստ Սուրբ Սարգիս եկեղեցում նույն օրը իր կոչման անդրանիկ պատարագն է մատուցում և խոսում ուխտի իր առաջին քարոզը՝ բնաբան ունենալով այլակերպության շարականի հետևյալ տողերը.

«Որ ի լերինն այլակերպեալ
Ցուցեր զաստուածային Քո զօրութիւնդ...»

Տ. ՀՈՎՆԱՆ ԱԲԵՂԱ ՏԵՐՏԵՐՅԱՆԻ ՈՒԽՏԻ ԱՆԴՐԱՆԻԿ ՔԱՐՈԶԸ

«Տէ՛ր, բարւոք է մեզ աստ լինել» (Մատթ. ԺԷ 4):

Առաքելաշունչ այս բառերն այլակերպության դեպքին ականատես Պետրոս առաքյալի ստացած տպավորության արդյունքն են հանդիսանում: Բառեր խորին խորհուրդով, բառեր՝ վեհիմաստ, որոնք արտասանվեցին Գալիլիայի սրբազան լեռ Թաբորի բարձունքների վրա, որտեղ լուսեղեն կերպարանքով այլակերպվեց մեր Տերը՝ Հիսուս Քրիստոս:

Ավետարանիչները Հիսուսի այլակերպության դրվագը ներկայացնելիս, նախընթաց եղելությունների և հանգամանքների հիշատակությամբ հնարավորություն են ընձեռում մեզ հստակ կերպով ըմբռնելու այլակերպության տոնի իմաստը լիցքավորելու համար դրա խորհուրդովը, մեր առօրյա կյանքի և գործերի մեջ:

Այդ օրերին Հիսուս, Կեսարիայի Փիլիպյան քաղաքը կատարած իր ճանապարհորդությունների ավարտին, իր հետ է վերցնում Պետրոս, Հակոբոս և Հովհաննես առաքյալներին և ուղևորվում է դեպի Թաբոր լեռ, այնտեղ կատարելու համար գիշերային իր հսկումն ու հանապազօրյա իր աղոթքը:

Գիշերային խաղաղ մենության մեջ Քրիստոս առանձնացած աղոթում էր:

Առաքյալներն օրվա երկար ճանապարհորդություններից հոգնած քնում էին, երբ հանկարծ նորօրինակ մի տեսիլքով տեղի է ունենում Քրիստոսի այլակերպությունը: Նրա դեմքը փայլատակում է ինչպես արեգակը, և նրա զգեստները դառնում են սպիտակ, ինչպես լույսը:

Առաքյալները լույսի ազդեցությունից սթափած և զարհուրած՝ լուսասփյուռ կերպարանքից, երկյուղալի հիացումով դիտում են պայծառ այդ տեսիլքն իր ամբողջ գեղեցկության մեջ, երբ այդ միջոցին նրանց են երևում Մովսեսն ու Եղիան, մարգարեները, որոնք խոսում էին Հիսուսի հետ:

Այս վիճակում Պետրոս առաքյալը իր առաջին տպավորության խոսքն է ուղղում Հիսուսին. «Տէ՛ր, բարւոք է մեզ աստ լինել»: Եվ մինչ նա խոսում էր, ահա մի լուսավոր ամպ հովանի է լինում նրանց վրա: Ամպի միջից առաքյալները լսում են. «Դա՛ է իմ սիրելի Որդին, Որին հավանեցի, Դրա՛ն լսեցեք»: Աշակերտները երբ լսում են այդ ձայնը, սաստիկ վախենում են: Սակայն, նույն միջոցին, Հիսուսի սովորական ձայնն է, որ նրանց ականջներին հնչում է քաջալերիչ մի շեշտով՝ ամրապնդելով նրանց հույսն ու հավատքը, վերահաստատելով նրանց հոգիների խաղաղությունը:

Ահա մոտավորապես այսպիսի պայմանների մեջ տեղի է ունեցել Քրիստոսի այլակերպությունը, որի միջոցով Տերը իր մեսիականության և աստվածորդիության համար շոշափելի մի փաստ եւ տվեց առաքյալներին և նրանց միջոցով՝ բոլորիս:

Այլակերպության դեպքը հրաշալի, միաժամանակ խորհուրդն է աստվածահայտնության:

Փառավոր ու լուսավոր այս տեսիլքին մեջ Քրիստոսին եկան միանալու Հին Կտակարանի երկու տիրական դեմքերը՝ Մովսեսն ու Եղիան: Հին Ուխտի այս փառավոր ներկայացուցիչներից Մովսեսն իբրև աստվածատես օրենսգետ և Եղիան՝ իբրև նախանձախնդիր օրինապահ, եկան վկայելու Քրիստոսի մասին իբրև Իսրայելի սպասած Մեսիայի և Նոր Ուխտի հիմնադրի: Իսկ Քրիստոսի առաքյալների ներկայությունը այլակերպության հրաշքին անհրաժեշտություն էր: Այլակերպության դեպքի միջոցով նրանց համար հստակ դարձավ Մեսիայի ճշմարիտ ըմբռնումը: Թաբոր լեռան հրաշալի տեսիլքն ամրապնդեց առաքյալների հավատքը Մեսիայի մասին:

Շուրջ երկու հազարամյակ է անցել Քրիստոսի երկրավոր կյանքի օրերից: Երկու հազարամյակ, և քրիստոնյա աշխարհը սրբությամբ է պահել ու միշտ մեծաշուք հանդիսություններով տոնախմբել՝ Քրիստոսի Պայծառակերպության հիշատակը:

Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին ևս ամեն տարի հանդիսություններով է նշում այս տոնը:

Մեր նախնիք Պայծառակերպության խորհրդով լուսազարդել են իրենց անձերը: Նրանք ճիշտ են ըմբռնել խորախորհուրդ այդ տեսիլքի նշանակությունը, որի միջոցով Քրիստոս մարդկությանը պարգևեց հոգեպես վերածնվելու անհրաժեշտությունը, պայծառակերպելու ազնվագույն սիրո զգացումներով և բարի տրամադրություններով:

Այստեղ կուզեի ձեր բոլորի ուշադրությանը հանձնել ևս մի պարագա: Մեր եկեղեցական օրացույցում այլակերպության տոնը հիշատակվում է նաև որպես Վարդավառ: Վարդավառ կոչումը գալիս է հեթանոսական շրջանից: Հայ հեթանոսական կրոնից մի հիշատակ է դա, որն իր մեջ խտացնում է մեր ազգային պատմության մի դրվագը: Ավանդության համաձայն Վարդավառը հանդիսացել է հեթանոսական շրջանի մեր մեծագույն տոնը, ցնծության և ուրախության տոնը, հայկական տարեսկզբի տոնակատարությունների օրը:

Հեթանոսական այդ տոնախմբությունները սիրելի են եղել մեր ժողովրդին: Սակայն, մեր ժողովուրդը նոր իմաստ, նոր նշանակություն է հաղորդել Վարդավառի հին տոնին: Քրիստոնեական կրոնի սիրո վարդապետությունը, բարերար ազդեցություն է բերել հայկական կյանքից ներս: Շնորհիվ քրիստոնեական գաղափարների, հայ ժողովուրդն իր մեջ գտել է վերստին ծնվելու, մի նոր կյանք կերտելու գաղափարը, ստեղծագործ թափով մի նոր կյանք ապրելու տենչն ու պայծառ մի ապագայի ակնկալությունը:

Ահա այս բոլորին քաջատեղյակ, գիտակից սիրով, կոչումիս հաստատ թելադրանքովը և ծառայության անսակարկ նվիրումովը, ուխտեցի ձայնակից դառնալ այլակերպության հրաշքին ականատես առաքյային և ասել. «Տէ՛ր, բարւոք է մեզ աստ լինել»:

Քառասուն օրեր առաջ այս սրբազան խորանին վրա մենք ևս զգեցանք մեր այլակերպության լուսափայլ նոր զգեստները: Բախտավորությունն ու երջանկությունը ունեցանք քահանայական ձեռնադրություն և օծում ստանալու ազ:ին շնորհազարդ Վեհափառ Տ. Տ. Վազգեն Ա Սրբազնագույն կաթողիկոսի կողմից:

Վեհափառ Հայրապետի հետ միասին մենք ևս բարձրացանք մե՛ր Թաբոր լեռ,

այլակերպվեցինք հոգվով և սրտով և իբրև նոր մարդիկ, նոր իդեալներով, բարի զգացումներով դարձանք դեպի ձեզ:

Հայ Եկեղեցու գեղեցիկ մեկ ավանդության համաձայն վերանվանվեցինք նոր անունով: Նոր անուն, նոր մարդ: Այնուհետև որպես մարդ նոր ու բարի գործերով խոստանում ենք ուրախացնել ազգիս Վեհափառ Հայրապետին և մխիթարությունը լինել մեր հավատացյալ ժողովրդին:

Իմ անդրանիկ պատարագով իմ առաջ բացվում է կյանքի և ծառայության մի նոր հանգրվան: Կյանքի այս նոր ճանապարհին, իբրև հայ հոգևորական, իմ նշանաբանը կլինի հավատք, հույս և սեր: Քրիստոնեական կրոնի այս առաքինությունները պիտի հանդիսանան իմ նոր կյանքի հիմնաքարերը: Այս նշանաբանը կփոխանցեմ նաև ձեզ, սիրելի հավատացյալներ, որպեսզի այս բառերը կյանքի վերածելով կազմենք ամուր ընտանիքներ, դառնաք միակամ ուժերով ոգեկան մի հավաքականություն:

Այլակերպության այս տոնը թող աստիթ հանդիսանա մեզ բոլորիս, որպեսզի նոր եռանդով և այլակերպված բարի զգացումներով վերսկսենք մեր նոր կյանքը: Եվ այդ նոր կյանքի ճանապարհին սիրենք մեր Եկեղեցին և հավատանք նրա սրբազան առաքելությանը:

Դարեր շարունակ Հայ Եկեղեցու սրբազան պարտքն է եղել հովվել հայ ժողովրդի զավակները, սնուցանել նրանց հոգիները քրիստոնեական և ազգային-հայրենասիրական զգացումներով: Այս բոլորի համար մենք երախտապարտ պետք է լինենք, հարգելով հիշատակը ա՛յն սրբազան գործիչներին, որոնք լույսով ողողեցին Հայոց աշխարհը և հայության սիրտն ու հոգին:

Սրբազան այս գործիչների ձայնը արձագանքել է նաև իմ հոգու ու սրտի խորքում և ինձ իրավունք տվել կրկնելու. «Տէ՛ր, բարւոք է մեզ աստ լինել»:

Տ. ԱԲԵԼ ԱԲԵՂԱ ՕՂԼՈՒԳՅԱՆԻ ՈՒԽՏԻ ԱՆԴՐԱՆԻԿ ՔԱՐՈԶԸ

Սրբազան արարողության մեծախորհուրդ այս պահին, Տե՛ր, որ արժանի գտար տկար և նվաստ անձս կոչելու Քո Սուրբ Սեղանին, զեղուն զգացումներով, հուզված հոգով ու երկյուղած սրտով, այս գեղեցիկ օրվա խորհուրդով, ահա խոնարհած կանգնել եմ Քո դիմաց, այս խնկաբույր տաճարի կիսաստվերում՝ ոգեկոչելու համար այլակերպության Քո սուրբ հիշատակը, լուսապսակ շարականագրի հոգու խորքերից պոռթկացած ձայնին միացնելով իմ էլ ձայնը՝

«Որ զճառագայթ փառաց քոց ցուցեր,
Արեգականակերպ փայլմամբ զարարածս
լուսաւորեցեր,
Զքեզ փառաւորեմք, Իմանալի Լոյս»:
«Որ ցոյց տվեցիր բո փառքի ճառագայթը,
Արեգակի նման փայլելով արարածներիս
լուսավորեցիր
Փառավորում ենք Քեզ, Իմանալի Լույս»:

Երեկո էր: Ջինջ երկինք: Արևի վերջին ճառագայթները մի կարմիրով շառագունել էին հորիզոնը: Թաբոր լեռան ստորոտից մինչև Մագդալայի բլուրներն ու դաշտերը սուրում էր ամառային մի հաճելի զեփյուռ և սահելով մի խումբ ուղևորների դեմքերն ի վար, գնում, անհետանում էր հեռու, անհունության մեջ:

Այդ ուղևորները դուրս էին եկել Փիլիպպյան Կեսարիա քաղաքի մոտից, իջել դեպի Բեթսայիդա, անցել ծովից և հառաջանալով Մագդալայի բլուրներով ու դաշտերով, մոտեցել էին Թաբոր լեռան ստորոտը:

Երևում էր, որ այդ ուղևորները երկար ճանապարհ էին կտրել: Բոլորի դեմքերը խանձվել էին ցերեկվա արևի կիզիչ ճառագայթներից. բոլորն էլ հոգնաբեկ էին: Այդ ուղևորները, կարծեք, նմանվում էին մի նավի, որ հողմահույզ օվկիանի ալիքները ճեղքելուց հետո, խաղաղ երեկոյան մտնում էր իր նավամատույցը հանգչելու:

Սակայն, նրանց մեջ կար մեկը, որ հավիտենական խաղաղությամբ ու խորհրդավոր պայծառության մի դեմքով և անհունորեն բարի աչքերով, որպես «նաւապետ բարի», ընթանում էր խմբի առջևից: Բայց, այդ ուղևորի հանդարտ ու անհունության պես խաղաղ կերպարանքի ներքո, Նրա սրտի խորքում, կար մարդկանց չարիք բերող անարդարությունների դեմ մի խորը տառապանք և մտքի խորքում՝ մարդկությունը մեղքից և տգիտությունից փրկելու մի աստվածային վճռականություն:

Այդ ուղևորը Հիսուսն էր, որ իր 12 առաքյալների հետ շրջում էր Հրեաստանով մեկ, արդարության, բարության ու ճշմարտության իր խոսքը որպես սերմնացան ցանելու մարդկանց հոգիների հողում, և երկնից արքայության իր գաղափարը որպես անստվեր լուսո մի ճառագայթ՝ լուսավորելու մարդկանց տխուր հոգիներն ու մութ մտքերը:

Երբ Հիսուս և իր առաքյալները Թաբոր լեռան ստորոտն էին հասել, Հիսուս ամենօրյա սովորության համաձայն, իր գիշերային հսկումն ու աղոթքը կատարելու հա-

մար, բարձրանում է լեռ՝ իր հետ վերցնելով միայն աշակերտներից երեքին՝ Պետրոսին, Հակոբոս ու Հովհաննես Զեբեդյան եղբայրներին, որպես աղոթակից ընկերների, իսկ մյուս ինները մնում են լեռան ստորոտում գիշերելու:

Երբ Հիսուս և իր երեք առաքյալները բարձրանում են լեռ ու կանգ առնում կանաչածածկ մի բացատում, Հիսուս իր աշակերտներից ոչ շատ հեռու, ոչ շատ բարձր մի ապառաժի մոտ, ծունկի է գալիս, ձեռքերն ու աչքերը դեպի երկինք կարկառած, սկսում է կատարել գիշերային իր հսկումն ու աղոթքը: Եվ մինչ Հիսուս աղոթում էր, նրա աշակերտները, ամբողջ օրվա ծանր հոգնության պատճառով, չեն կարողանում անքնությանը դիմանալ, և մի ծանր թմրության ներքո, որը իջել էր նրանց աչքերի ու մարմնի վրա, քնել էին մոտակա մի ծառի տակ:

Հիսուս դեռևս հսկումի և խոր ներհայեցողության մեջ, ամբողջ իր էությամբ կլանված՝ աղոթում էր: Եվ այդ ժամանակ նորօրինակ մի դեպք է տեղի ունենում: Նրա դեմքը ճառագայթում է արեգակի նման, և զգեստները փայլում են, խիստ սպիտակությամբ, ինչպես լույսը: Կեսգիշերվա խավարում, Հիսուսի դեմքից և զգեստներից ճառագայթող սաստիկ լույսի ազդեցությունից, նրա աշակերտները արթնանում են և հիացումի մեջ, և միգուցե ավելի քան նրանց հիացմունքն ու աքանչացումը, շփոթմունքի մեջ ընկնելով, ապշահար, դիտում են իրենց հույժ սիրելի Վարդապետի լուսափայլ կերպարանքը, որ կանգնած՝ խոսում էր երկու անձնավորությունների՝ Հին Կտակարանի ահեղ դեմքերից՝ Մովսեսի ու Եղիայի հետ: Եվ մինչ աշակերտները ապշահար նայում էին նորահրաշ այդ տեսիլքին, Պետրոս առաքյալը, որ բնավորությամբ համեմատաբար ավելի համարձակ էր և տաքարյուն, քան մյուսները, չկարողանալով զսպել իր հիացումը, խոսքերը ուղղում է Հիսուսին ու ասում. «Տե՛ր, լավ է, որ մենք այստեղ ենք. եթե կամենաս, երեք տաղավարներ շինենք, մեկը քեզ համար, մեկը՝ Մովսեսի, և մյուսը՝ Եղիայի» (Մատթ. ԺԷ 4—5): Պետրոս առաքյալը իր շփոթմունքը առավել ևս արտահայտող խոսքերը չամբողջացրած, երկնքում լուսավոր մի ամպ է երևում և ամպի միջից լսվում է մի ձայն, «Դա՛ է իմ սիրելի Որդին, Որին հավանեցի, Դրա՛նն լսեցեք» (Մատթ. Է 5—6):

Առաքյալները, որոնք հազիվ էին կարողանում զսպել իրենց շփոթմունքը, զարմանքն ու երկյուղը, ի տես իրենց Վարդապետի հրաշալի կերպարանքին, լսելով նաև լուսավոր ամպի միջից եկող երկնավոր ձայնը ահավոր, սարսափազդու պատգամն այդ երկնավոր, ներքին բուռն մի սարսափ են ապրում և հազիվ սթափվելով իրենց շփոթահար վիճակից երեսնիվայր գետին են ընկնում:

Սիրելիք իմ ի Քրիստոս. աշխարհից ու տիեզերքից չէ՞ր այդ ձայնը, մարդկային զգայարանների և իմացական կարողությունների ներքո ընկնող սովորական մի ձայն չէր այդ ձայնը, այլ այն գալիս էր անհունության միջից, երկնքի խորքերից, որ Հին Կտակարանի պատմության մեջ, մեկ անգամ Քորեբ լեռան կատարներին, անկեզ մորենիի միջից լսելի էր դարձել Մովսեսին, թե՝ «Մովսե՛ս, Մովսե՛ս, մի մոտեցիր այստեղ, հանիր քո կոշիկները, քանզի քո կանգնած տեղը սուրբ է» (Ելք. Գ 5):

Նույն ձայնը Սինա լեռան բարձունքներին դարձյալ լսելի էր դարձել Մովսեսին և տվել էր նրան աստվածապարգև պատվիրանները տասնաբանյա:

Երկնային այդ ձայնն էր, որ լսելի էր դարձել նաև Իսրայելի մարգարեներին, և նույն այդ ամպն էր լուսավոր, որ քառասուն տարի շարունակ առաջնորդել էր իսրայելացիներին Սինայի կիզիչ անապատում:

Նույն այդ ձայնը աստվածամերձ, Նոր Կտակարանի պատմության մեջ, առաջին անգամ լինելով, Հորդանան գետի գեղատեսիլ ափերին, Քրիստոսի մկրտության ժամանակ, լսելի էր դառնում մարդկությանը, գերահրաշ մի հայտնությամբ, ծանուցելով աշխարհին Հովհաննես Մկրտչից մկրտվող Հիսուսի Աստված և Աստվածորդի լինելը: Նույն այդ ձայնը հայրական այսօր նորօրինակ մի հայտնությամբ մեկ անգամ ևս է խոսում Թաբոր լեռան բարձունքներից և լսելի դառնում Հիսուսի ընտրյալ աշակերտներին:

Ինչպիսի՜ մեծ սքանչելիք, ինչպիսի՜ հրաշալիք մարդու համար: Արարիչը երկնքի ու երկրի, Արարիչը բոլոր տեսանելիների ու անտեսանելիների և, Արարիչը հողածին մարդու, իր անհասանելի, անըմբռնելի և անքացատրելի ձայնը այսօր լսելի է դարձնում մարդկային տկար ականջներին, լուսավոր մի ամպի միջից: Ինչպիսի՜ աներևակայելի խոնարհություն մարդկային հոգու համար, ինչպիսի՜ մեծախորհուրդ հայտնություն մարդկային մտքի համար: Աստվածորդին, անպարագրելի, անբովանդակելի և անիմանալի իր անձը տեսանելի է դարձնում մարդկային աչքերին. Թաբոր լեռան աստվածակոխ բարձունքներին, պայծառակերպության հրաշալի մի դեպքով:

Երանի՜ է ձեզ, առաքյալք Աստուծո, որ

ձեր արդար ականջներով լսեցիք երկնային այդ ձայնը, պատգամն այդ սքանչելի: Երանի՜ է ձեզ, Որդիք Զեբեթյան, որ ձեր բարի աչքերով տեսաք Ճշմարտության Արեգակին, ձեր արդար ականջներով լսեցիք նրա աստվածապատգամ քարոզներն ու խրատները և ձեր ձեռքով շոշափեցիք նրան ու ձեր էությամբ վայելեցիք նրա երկնառաք անձնավորությունն ու ներկայությունը:

Մենք էլ, մեր հոգիները հրդեհած Ավետարանի այն հուր սիրով և գոտեպնդած մեր անձերը՝ ձեր ծով հավատքով, եկել ենք այստեղ, ձեզ նման ճանաչելու, զգալու Բարի Վարդապետին, այնպես, ինչպես զգում և ըմբռնում էիք դուք:

Մենք եկել ենք այստեղ մեր հոգու ներքին աչքերով տեսնելու և հետևելու քաջ Հովվին, արդարության, բարության, սիրո, հավատքի լուսաշավիղ ճանապարհով, որպեսզի մեր ձայնը միացնելով լուսապսակ շարականգրի հոգու խորքերից բխած այն սրբազան ձայնին, նրա հետ միասին բուռն հավատքով գոչենք:

«Քրիստոս Աստուած մեր, շնորհիր մեզ
Պետրոսի և Զեբեթյան որդիների հետ
Արժանանալու քո աստվածային տեսքին»:

Սիրելի հավատացյալներ, այսօր ևս Թաբոր լեռան բարձունքներից շողում է Քրիստոսի պայծառակերպության անստվեր լուսո ճառագայթները: Այդ ճառագայթները արդարության, ճշմարտության և բարոյականի գերագույն հաղթանակներն են: Եկեք սիրելիներ, եկեք գնանք դեպի այդ աղբյուրը լույսի՝ ընտրելու համար թեկուզ մեկ կաթիլ, թեկուզ մեկ ճառագայթ, որպեսզի կարողանանք լուսավորել մեր հոգին լույսով այդ ճշմարտության՝ ի բաց վանելու համար մեր հոգում բուն դնող խավարը:

Տ. ԶԱՏԻԿ ԱԲԵՂԱ ԱՎԵՏԻՔՅԱՆԻ ՈՒԽՏԻ ԱՆԴՐԱՆԻԿ ՔԱՐՈԶԸ

Կիրակնօրյա տերունական խորհրդավոր այս պահին, խնկաբույր և հոգեթով այս մթնոլորտում, երբ Տիրոջ Սեղանին ս. պատարագ է մատուցվում, և ինձ առիթ է ընձեռված իմ անդրանիկ պատարագի առթիվ տալ իմ առաջին քարոզը, ես այն սկսելուց առաջ, որդիական ու նվիրական իմ պարտքն եմ համարում շնորհակալության և երախտագիտության խոսք հղել Նորին Սրբություն Ամենայն Հայոց Հայրապետին, որը սրանից մոտ քառասուն օրեր առաջ, Ս. Էջմիածնի հիմնադրության 1677-րդ տարեդարձի օրը, Մայր տաճարում, Իր շնորհաբաշխ ձեռամբ, ինձ ձեռնադրեց կուսակրոն քահանա՝ իմ երկու ընկերների հետ, անմնացորդ նվիրվելու մեր Եկեղեցու և ժողովրդի ծառայության նվիրական գործին:

Ձեռնադրությանն անմիջապես հաջորդեցին 40 օրերի պահեցողություն, աղոթք, խոկում և Ս. Գրական ընթերցումներ ու ահա այսօրվա Տիրոջ սուրբ Սեղանին մոտենալու հոգևոր առիթ և հոգևոր բերկրանք:

Այսօր ինձ համար ուխտի օր է, քանի որ ինձ հնարավորություն է ընձեռված իմ անդրանիկ ս. պատարագը մատուցելու ծննդավայրիս՝ քաղաքամայր Երևանի հոյակերտ այս տաճարում:

Ս. պատարագի այս պահին կամենում եմ տալ իմ առաջին քարոզը՝ բնաբան ունենալով միջնադարի մեծ շարականագիր Մովսես Քերթողի այսօրվա տոնին ձոնված շարականի հետևյալ խոսքերը.

«Որ ի լերինն այլակերպեալ, ցուցեր զաստուածային Քո զօրութիւնդ, զՔեզ փառաւորեմք, Իմանալի Լոյս»:

Այս բառերով շարականագիրը փառաբանության աղոթք է մատուցանում առ Քրիստոս և ասում.

«Տե՛ր, Դու, որ Թաբոր լեռան վրա այլակերպվելով ցո՛ւյց տվեցիր աստվածային Քո զորությունը, Քե՛զ ենք փառավորում, ո՛վ Իմանալի Լույս»:

Սիրելի հավատացյալ ժողովուրդ, այսօր Վարդավառ է, տո՛նը Պայծառակերպության մեր Տեր Հիսուս Քրիստոսի: Եվ քիչ առաջ արտասանած շարականագրի խոսքը ներբողումն է տերունական գերահրաշ այդ եղելության:

Անշուշտ ձեզանից շատ-շատերին ցանկալի և հետաքրքիր կլիներ իմանալ, թե ինչ է այս Վարդավառը կամ Տիրոջ Պայծառակերպության տոնը, որ միշտ հանդիսությամբ և շուքով տոնախմբում է մեր Եկեղեցին:

Ս. Գրական ընթերցումներից մեզ հայտնի է, որ մեզանից մոտ 2000 տարի առաջ Աստվածորդին աշխարհ գալով, իր երկրային կյանքի ընթացքում զբաղվեց փրկագործական, մարդասիրական ու բարոյական վսեմ գաղափարների՝ եղբայրական փոխադարձ սիրո և բարիկամեցողության քարոզմամբ: Նրա և իր առաքյալների գործունեության դաշտը թեև եղավ փշոտ ու դժվար, սակայն նա կարողացավ փուշ ու տատասկից վարդ քաղել, մարդկության փրկության և բարոյական կատարելության համար:

Եվ ահա նա իր երկրային տնօրենու-

թյան շրջանում, ամառային մի տաք օր, իր հետ վերցնելով աշակերտներից Պետրոսին, Հակոբոսին և նրա եղբայր Հովհաննեսին, աղոթելու համար բարձրանում է Թաբոր լեռը: Երբ նրանք հասնում են լեռան գագաթը, այնտեղ դաշտի խեղդուկ օդին փոխարինում է սարի թարմ և զով օդը: Սարի ազատ բարձունքը ևս Հիսուսին տրամադրում է աղոթքի: Նա շատ բան ուներ խոսելու իր Հոր հետ, և ահա սարի խաղաղ առանձնությունը հարմար առիթ է շնորհում նրան:

Բնության համայնապարփակ ու գեղեցիկ տեսարանը տարածվում էր Թաբորից մինչև Մեռյալ ծով: Հիսուս փորձում էր մտավոր կամար հյուսել Թաբորից մինչև աստվածային բարձունքը՝ կենդանի հարաբերության մեջ մտնելու իր Հոր հետ:

Այդ պահին նրա աշակերտները, երկար ճանապարհից հոգնած, նիրհում էին հանգըստյան կարոտով:

Հիսուս պահանջ էր զգում իր սիրտը բաց անելու Հոր առաջ: Նրա համար ցավ էր, որ տակավին իր աշակերտները անընդունակ են աստվածային մտքերն ու ծրագրերը ըմբռնելու: Եվ ահա այդ վիճակի մեջ, հոգեպես թեթևություն գտնելու նպատակով, նա ապավինում է իր Հոր աստվածային խորհրդին ու սիրուն:

Լսվում է նրա ջերմեռանդ աղոթքը: Նա տեսնում է իր ներքին հոգեկան աշխարհը՝ իրականի փոխված: Եվ ահա նրա ոտքերի տակ գտնվող մեղքերի գերի դարձած աշխարհը վերածվում է երկնային շողով լուսավորված և պայծառացած մի հովտի: Երևում են նաև երկու այլ դեմքեր՝ Հին Ուխտի մեծագույն անձինք՝ Մովսեսն ու Եղիան, որոնք նույնպես կանգնում են լուսավոր ու պայծառ, լուսավորված՝ մարդկության կենտրոնական արևի՝ Պայծառացյալ Հիսուսի ճառագայթներով:

Այդ պահին հանկարծ արթնանում են աշակերտները և ականատես լինում մի սքանչելի պատկերի, որ երբեք չէին տեսել: Իրենց վարդապետը այլակերպվել էր, նրա դեմքը արևից ավելի պայծառ էր շողշողում: Անշուշտ սա երեկոյան մայր մտնող արեգակի վերջալույսը չէր, որ ընկել էր նրա դեմքին, այլ մի լույս էր գերբնական, ընդունակ՝ լուսավորելու ամբողջ տիեզերքը:

Ահա և երկնային ձայնը՝ «Դա է Որդին իմ սիրելի, ընդ որ հաճեցայ, դմա լուարուք»: Սա աստվածային մի կոչ էր, որ հրավիրում էր աշակերտներին՝ հետևելու իրենց Վարդապետին, ընթանալու նրա ճանապարհով, խաչերը ուսերին Գողգոթա բարձրանալու, որովհետև այդ էր հավիտենական կյանքի ու փառքի ճանապարհը: Այդ ձայնը, որ ալեկոծեց նրանց հոգին, ու սարսուռ պատեց նրանց մարմինը, վերջին և գերագույն ակտն էր նրանց աչքի առաջ տեղի ունեցող այն երևույթի, որ ծածկված էր խորհրդավորության շղարշով: Եվ քիչ հետո այն պատկերը, որ ականատես էին եղել աշակերտները, հեռանում է նրանց աչքերից: Այդ պահին գերբնական ոգևորության բացականչություն էր, որ թռավ Պետրոս առաքյալի շրթունքներից, «Տէ՛ր, բարւոք է մեզ աստ լինել և եթէ կամիս, արասցուք երիս տաղաւարս. մի քեզ, մի Մովսիսի և մի Եղիայի»:

Սիրելի հավատացյալ ժողովուրդ, ահա այս է Պայծառակերպության կամ Այլակերպության հրաշափառ այն դեպքը, որ կատարվեց Թաբոր լեռան վրա:

Իսկ ձեզանից շատ-շատերը կարող են հարց տալ, թե ինչո՞ւ այդ տոնը կոչվում է նաև Վարդավառ, և ինչո՞ւ հայ մարդիկ այդ օրը միմյանց վրա ջուր են ցանում: Ինչպես ձեզ հայտնի է, քրիստոնեությունից առաջ Հայաստանում տիրական էր հեթանոսական կրոնը: Եվ երբ քրիստոնեությունը հաղթանակեց Հայաստանում, այն հեթանոսությունից ժառանգեց ժողովրդական մի քանի գեղեցիկ տոներ, որոնք դարեր շարունակ առնչվելով քրիստոնեական տոների հետ, կորցրեցին հեթանոսական իրենց հանգամանքը: Հեթանոսական շրջանի ամենաժողովրդական տոներից մեկն էր Վարդավառը, որը նվիրված էր Աստղիկ դիցուհուն:

Ս. Գրիգոր Լուսավորիչը Վարդավառի հին տոնը փոխարինեց Քրիստոսի պայծառակերպության տոնով:

Հնում Վարդավառը նշվել է հանդիսավորությամբ, ժողովրդական երգերով, պարերով: Տոնի օրը մարդիկ իրար վրա անուշահոտ կամ սովորական ջուր էին ցանում և իբրև խաղաղության և անմեղության նշան՝ աղավնիներ թռցնում: Տոնը Վարդավառ է կոչվել, որովհետև այդ օրը մարդիկ սիրո և գեղեցկության աստվածուհուն՝ Աստղիկին, գուցե և իրար, վարդ էին նվիրում:

Վարդավառը հանդիսացել է սիրո, գեղեցկության, ջրի պաշտամունքի, վարդ ու ծաղկի տոն, որն իր սովորություններով մշտապես վառ է մնացել մեր ժողովրդի կենցաղում: Եվ պատահական չէ, որ Ժ դարի մեր Եկեղեցու մեծ Սուրբ Գրիգոր Նարեկացին իր տաղերից մեկը ձոնել է այդ տոնին:

«Գոհար վարդն վառ առեալ
Ի վեհից վարսիցն արփենից...»

Ահա տերունական այս մեծ տոնի իմաստը:

Սիրելինե՛ր, այսօր մեր կյանքում ևս առկա են Թաբորի բարձունքներ: Այսօր իր Թաբոր լեռն է ապրում նաև մեր Եկեղեցին, ուժ և կորով ստանալով պայծառակերպված Ս. Էջմիածնից:

Սիրելի եղբայրնե՛ր և քույրե՛ր, աշխատենք վառ պահել մեր առաջ Փրկչի լուսեղեն պատկերը, ինչպես առաքյալները Թաբորի վրա: Նա՛ կլինի մեր մխիթարիչ ընկերը այս աղմկահույզ աշխարհում, նա՛ կլինի մեր լաստանավը կյանքի ալեկոծ և փոթորկոտ ծովում:

Այս գիտակցությամբ ու համոզումով եկեք ուրեմն մեկ անգամ ևս մեր տիրաբաղձ ձեռքերը դեպի վեր կարկառած մեր սրտի աղոթք-աղերսը ուղղենք առ Քրիստոս և ասենք. «Պայծառակերպյալ Հիսուս, քեզ ենք դիմում, որ ինչպես երկնային լուսավոր լուսավորեցիր աշակերտներիդ միտքը՝ ըմբռնելու աստվածային ճշմարտությունները, լուսավորիր նաև մեր միտքը՝ լավ հասկանալու համար Ավետարանի ճշմարտությունները»:

Աստված մեր, անսասան պահիր մեր Թաբոր լեռը, պայծառակերպյալ Ս. Էջմիածինը և վերածնված մեր մայր հայրենին: Երկար կյանք պարգևիր Թաբորի լույսով պայծառացյալ լուսատեսիլ և լուսաբաղձ Հայոց Հայրապետին:

Օգնական և պահապան եղիր ցաք ու ցրիվ եղած, բազմիցս հալածված, նահատակված, գերեզման իջած ու այսօր պայծառակերպված ու հարություն առած հայ ժողովրդի բեկորներին, որ ի Հայաստան և ի սփյուռս աշխարհի, այժմ և հավիտյան, ամեն»: